ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 11, 2022
ՈՒՄԻՑ՝ OCCRP

Հարգելի պրն Սարգսյան,

Մենք լրագրողներ ենք, աշխատում ենք OCCRP-ում, որը հետաքննող լրագրողների և մեդիա կենտրոնների կոնսորցիում է: Մենք պատրաստվում ենք հրապարակել հոդվածների շարք, որը վերաբերում է Սենթ Քիթս և Նևիսում գործող՝ «Քաղաքացիություն ներդրումների դիմաց» ծրագրին:

Հոդվածներում քննարկվում է «Հենլի ընդ Փարթներս» ընկերության՝ 2006-ից Սենթ Քիթս և Նևիսի քաղաքացիության ծրագրի վերանախագծման և վերագործարկման մեջ ունեցած դերը և, երբ դա բխում է հանրային շահից, գնահատական է տրվելու որոշ անձանց, այդ թվում՝ քաղաքական գործիչների, պաշտոնյաների և նրանց հետ փոխկապակցված անձանց (politically exposed persons) և գործարարներին, որոնք կապված են պատժամիջոցների կամ ֆինանսական հանցագործությունների հետ և «Հենլի ընդ Փարթներսի» միջոցով դիմել են Սենթ Քիթս և Նևիսի անձնագրեր ստանալու համար:

Հասկանում ենք, որ
2009-ին կամ մոտավորապես այդ ժամանակ Դուք ձեռք եք բերել Սենթ Քիթս և Նևիսի քաղաքացիություն «Հենլի ընդ Փարթներսի» օգնությամբ,

2009-ին կամ մոտավորապես այդ ժամանակ Սենթ Քիթս և Նևիսի Ձեր անձնագրի ժամկետը թարմացվել է «Հենլի ընդ Փարթներսի» միջոցով: 2018-ի մարտի 2-ին Դուք ընտրվել եք ՀՀ նախագահի պաշտոնում:

Մենք ցանկանում ենք ձեզ հնարավորություն տալ մեկնաբանելու վերը նշված պնդումները և պատասխանել հաջորդիվ հարցերին

1. Որքա՞ն ներդրում եք արել ծրագրի չափանիշներին համապատասխանելու համար: Արդյոք դուք ընտրել SIDF ներդրումը, թե՞ անշարժ գույքի տարբերակը:
2. ՀՀ Սահմանադրության 124.2 հոդվածի համաձայն՝ նախագահի ցանկացած թեկնածու ընտրություններին նախորդող վեց տարիների ընթացքում պետք է ունենա միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:
3. Ձեր անձնագիրը ներկայումս ի՞նչ կարգավիճակ ունի:

Խնդրում ենք ուղարկել ձեր մեկնաբանությունները այս էլ. հասցեին մինչև աշխատանքային օրվա ավարտը՝ 2022-ի հունվարի 18-ը: Եթե մինչև այս վերջնաժամկետը չպատասխանեք, մենք կենթադրենք, որ չեք ցանկանում մեկնաբանել:

Եթե ցանկանում եք ուղղակիորեն քննարկել այս հարցը, ապա առաջին հերթին խնդրում ենք ձեր ցանկացած մտահոգություն ուղղել մեզ էլ.փոստի միջոցով: Մենք շատ շնորհակալ

կլինենք, եթե դուք հաստատեք, որ ստացել եք այս նամակը:

Հարգանքով՝
OCCRP

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 12, 2022
ՈՒՄԻՑ՝ ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆ (ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ)

Հարգելի **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**,

Ի պատասխան նախագահի աշխատակազմ ուղարկված 2022 թ-ի հունվարի 11-ի Ձեր գրության՝ տեղեկացնում ենք, որ պահանջվող տեղեկատվությունը պարունակում է Արմեն Սարգսյանի վերաբերյալ անձնական տվյալներ, և նախագահի աշխատակազմն այդ տեղեկությանը չի տիրապետում:

Այսպիսով, Ձեր նամակն ուղարկվել է Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանին, և պարոն նախագահը նշել է, որ Ձեզ կպատասխանի անձամբ կամ իր անձնական քարտուղարի միջոցով:

Լավագույն մաղթանքներով,
Էմիլ Տարասյան

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 17, 2022
ՈՒՄԻՑ՝ ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆ (ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ)

Հարգելի OCCRP,

Անդրադառնում ենք հունվարի 11-ին նախագահ Սարգսյանին ուղարկած ձեր նամակին:

Ճիշտ է, որ նախագահ Սարգսյանը ընտրվել է ՀՀ նախագահի պաշտոնում 2018 թ.-ի մարտի 2-ին: Ձեր նամակում ՀՀ Սահմանադրության 124.2 հոդվածին հղումը նույնպես ճիշտ է: Պրն Սարգսյանը չի կարծում, որ Ձեր նամակում տեղ գտած մնացած պնդումները ճիշտ են, բայց շնորհակալ կլինի, եթե Դուք տրամադրեք այդ պնդումների հիմք հանդիսացող մանրամասներ, ներառյալ այս պնդումները հաստատող ցանկացած փաստաթղթային ապացույց, որպեսզի նա կարողանա պատշաճ կերպով դիտարկել դրանք և պատասխանել Ձեզ:

Խնդրում ենք բոլոր հետագա նամակները ուղարկել այս հասցեին՝ **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**

Հարգանքով՝
ՀՀ նախագահի աշխատակազմ

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 17, 2022
ՈՒՄԻՑ՝ OCCRP

Հարգելի պրն Սարգսյան,

Սենթ Քիթս և Նևիսում «Քաղաքացիություն՝ ներդրման դիմաց» ծրագրի վերաբերյալ մեր հետաքննության ընթացքում մենք հանդիպեցինք փաստաթղթային ապացույցների այն մասին, որ 2009 թ.-ին կամ մոտավորապես այդ ժամանակ դուք ձեռք եք բերել Սենթ Քիթս և Նևիսի անձնագիր «Հենլի ընդ Փարթներս»-ի միջոցով: Փաստաթղթային ապացույցները նաև ցույց են տալիս, որ 2019 թ.-ին կամ մոտավորապես այդ ժամանակ Սենթ Քիթս և Նևիսի Ձերանձնագիրը թարմացվել է «Հենլի ընդ Փարթներս»-ի կողմից: Ձեր անվամբ անձնագիրը, որը մենք տեսել ենք, ունի հետևյալ համարը՝ **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**, ժամկետը լրանում է **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**:

Ելնելով այս հանգամանքից՝ մենք ցանկանում ենք ձեզ հնարավորություն տալ մեկնաբանելու վերոնշյալ հայտարարությունները և պատասխանել հաջորդիվ հարցերին:

1. Որքա՞ն ներդրում եք արել ծրագրի չափանիշներին համապատասխանելու համար: Դուք ընտրել եք SIDF ներդրու՞մը, թե՞ անշարժ գույքի տարբերակը:
2. ՀՀ Սահմանադրության 124.2 հոդվածի համաձայն՝ նախագահի ցանկացած թեկնածու ընտրություններին նախորդող վեց տարիների ընթացքում պետք է ունենա միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:
3. Ձեր անձնագիրը ներկայում ի՞նչ կարգավիճակ ունի:

Խնդրում ենք ուղարկեք Ձեր պատասխանը մինչև 2022-ի հունվարի 20-ը, աշխատանքային օրվա ավարտը: Եթե ձեզանից լուր չունենանք, կհամարենք, որ չեք ցանկանում մեկնաբանել:

Հարգանքով՝
OCCRP

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 19, 2022
ՈՒՄԻՑ՝ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարգելի **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**,

Շնորհակալություն Ձեր նամակի համար: Ես հիմա աշխատանքի չեմ: Կպատասխանեմ Ձեզ այսօր՝ ավելի ուշ:

Բարեմաղթանքով՝
Արմեսն Սարգսյան

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 20, 2022
ՈՒՄԻՑ՝ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարգելի **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**,

Շնորհակալություն ձեր նամակի և այս խնդրին իմ ուշադրությունը հրավիրելու համար: Ես Ձեզ անձամբ եմ գրում, քանի որ շատ լուրջ եմ վերաբերվում ձեր հարցմանը և ուրախ եմ բացատրել իրավիճակը:

Թեև օգտակար կլիներ տեսնել ձեր նամակում հիշատակված փաստաթղթային ապացույցների պատճենները, ես ուսումնասիրել եմ այս խնդրին առնչվող իմ ունեցած սահմանափակ թվով արխիվային ֆայլերը, որպեսզի կարողանամ պատասխանել ձեզ:

2000-2013 թթ.-ին ես մասնավոր քաղաքացի եմ եղել, որևէ պետական պաշտոն չեմ զբաղեցրել: Այս ընթացքում ես եղել եմ խորհրդատու մի քանի բազմազգ կորպորացիաների խորհուրդների համար և խորհրդատվական աշխատանքից ստացված եկամուտն օգտագործել եմ աշխարհի տարբեր վայրերում գործող բիզնեսներում ներդրումներ անելու համար, ոչ Հայաստանում: Ինձ հատկապես հետաքրքրում էր հյուրանոցային ոլորտը, և ես համաձայնագիր էի ստորագրել ներդրողների հետ՝ ձեռք բերելու եվրոպական խոշոր քաղաքներից մեկում Hyatt հյուրանոցի բաժնետոմսերը, միևնույն ժամանակ հետաքրքրված էի նաև Մերձավոր Արևելքի և Կարիբյան ավազանի հյուրանոցներում ներդրումներով:

Հնարավորություն ստեղծվեց մոտ 500,000 ԱՄՆ դոլարի ներդրում կատարել Սենթ Քիթսում Park Hyatt հյուրանոցի զարգացման համար՝ նպատակ ունենալով ժամանակի ընթացքում մեծացնել ներդրումները, երբ նախագիծը կձևավորվեր: Սա ոչ թե 2009 թվականին էր, ինչպես դուք նշում եք ձեր նամակում, այլ տարիներ անց: Հետագայում հասկացա, որ նման ներդրման հետ տրվում էր նաև Սենթ Քիթսի անձնագիր *(քաղաքացիություն՝ Խմբ.)*, բայց քանի որ ներդրումն էր շարժիչ գործոնը, ինձ անձնագիրն ընդհանրապես չէր հետաքրքրում: Ուստի ես գրեցի ընկերությանը, որը կազմակերպել էր ներդրումներն ինձ համար՝ բացատրելով իրավիճակը և խնդրելով, որ Սենթ Քիթսի իմ քաղաքացիությունը սառեցվի մինչև հետագա ծանուցումը:

2013 թվականի օգոստոսին, երբ հասկացա, որ շուտով նշանակվելու եմ Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան, խնդրեցի կազմակերպել հյուրանոցի բաժնեմասի սեփականության իրավունքի փոխանցումը ընտանիքիս անդամին: Ես խնդրեցի իմ փաստաբանին՝ պրն Էնթոնի Բանքրին «Բերվին Լեյթոն Փեյսներից» (Berwin Leighton Paisner), վերադարձնել Սենթ Քիթսի անձնագիրը և ես ենթադրում էի, որ իմ խնդրանքը բավարարվել է:

2017 թ.-ի վերջին հասկացա, որ կարող եմ դառնալ ՀՀ նախագահի թեկնածու: Ուստի ես կապ հաստատեցի պրն Էնթոնի Բանքրի հետ՝ ստուգելու՝ արդյոք իմ բոլոր գործերը

կարգին են, որի ընթացքում պարոն Բանքրը հայտնաբերեց, որ գործարքը կազմակերպող ընկերությունը չի հաստատել իմ սկզբնական խնդրանքը: Ես նորից գրեցի նրանց 2017 թ.-ի դեկտեմբերին: Այդ նամակին պատասխան չեմ ստացել:

Սրանից կարճ ժամանակ անց ես իմացա, որ այն անձը, ում ես նամակներ էի ուղարկում, վատառողջ է եղել և այնուհետև մահացել է, ուստի իմ խնդրանքները չեն կատարվել: Ես գրեցի նրա որդուն, որը նույնպես աշխատում էր այդ ընկերությունում, բացատրեցի իրավիճակը և կրկնեցի իմ խնդրանքը:

Համոզվելու համար, որ խնդիրներ չկան, ես պարոն Բունկերի հետ անցա քաղաքացիությունից հրաժարվելու հաստատման գործընթացի միջով, ներառյալ վերը նշվածը հաստատող երդումով տրված գրավոր ցուցմունքը և Սենթ Քիթսի քաղաքացիությունից հրաժարվելու մասին դիմում տվեցի: Այդ ժամանակվանից ես ոչ մեկից ոչ մի լուր չէի ստացել այս հարցի վերաբերյալ:

Հետևաբար, ես զարմացա, երբ իմացա ձեր նամակից, որ, ըստ երևույթին, կա իմ անունով անձնագիր, որը երկարաձգվել է 2019 թվականին: Ես չեմ կարող մեկնաբանել դա առանց պատճենը տեսնելու, բայց որքանով ես մտահոգված եմ, հաշվի առնելով, որ ես արել եմ բոլոր հնարավոր քայլերը Սենթ Քիթսի քաղաքացիությունից հրաժարվելու համար, ես քաղաքացիություն չունեմ և չպետք է ունենայի այն պահից, երբ առաջին անգամ հանձնարարեցի, որ այն սառեցվի: Ինձ երբեք Սենթ Քիթսում ոչ մի պետական մարմին չի ծանուցել որևէ անձնագրի երկարաձգման մասին և միշտ համարել եմ, որ հրաժարվել եմ այդ քաղաքացիությունից:

Ի վերջո, ձեր նամակում պնդում է արվում, որ անձնագիրը տրամադրվել և թարմացվել է «Հենլի ընդ Փարթներս»-ի կողմից: Որքան հիշում եմ, ես նախկինում չեմ առնչվել նրանց հետ, և մեր հարաբերություններն Park Hyatt նախագիծը մշակողի՝ Range Developments-ի հետ ուղղակի են եղել, բայց, կրկին, ես ի վիճակի չեմ պատշաճ կերպով մեկնաբանել՝ առանց տեսնելու փաստաթղթային ապացույցները, որոնց մասին նշված է ձեր նամակում:

Հուսով եմ, որ դուք պատշաճ ուշադրություն կդարձնեք իմ բացատրությանը, և որ այս հարցերի վերաբերյալ ցանկացած հոդված արդար և ճշգրիտ կլինի: Ես պատրաստ եմ պատասխանել ցանկացած կոնկրետ հարցի, որը դուք կարող եք ունենալ՝ այս հարցը հարթելու համար:

Անկեղծորեն Ձեր,
Արմեն Սարգսյան

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 21, 2022
ՈՒՄԻՑ՝ OCCRP

Հարգելի պրն Սարգսյան,
Շնորհակալություն նամակի համար:

Հաշվի առնելով ձեր պատասխանը՝ կուզենայինք ձեզ որոշ հավելյալ հարցեր ուղղել

1. Ե՞րբ եք ներդրում արել Սենթ Քիթսում գտնվող Park Hyatt հյուրանոցում: Ո՞վ է կազմակերպել ներդրումը:
2. Կոնկրետ ե՞րբ եք սկսել քաղաքացիությունից հրաժարվելու գործընթացը: Ե՞րբ են ներկայացվել քաղաքացիությունից հրաժարվելու տեղեկանքը և երդումով տրված գրավոր ցուցմունքը: Այս առումով եթե կարողանաք մեզ տրամադրել որեւէ փաստաթուղթ, շնորհակալ կլինենք:
3. Թվում է, թե Սենթ Քիթս և Նևիսի իշխանությունները Ձեր անձնագիրը սառեցնելու խնդրանքից հետո ձեզ հետ կապ չեն հաստատել՝ հաշվի առնելով այն, որ Ձեր անձնագրի կարգավիճակը կարծես թե «կասեցված» է, այլ ոչ թե քաղաքացիությունից հրաժարվելու գործընթացի մեջ: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:
4. Քանի որ ներդրումային ծրագրով Սենթ Քիթս և Նևիսի քաղաքացիություն կարող են ձեռք բերել նաև ներդրում անողի ընտանիքի անդամները, Ձեր ընտանիքի անդամները ստացե՞լ են Սենթ Քիթս և Նևիսի քաղաքացիություն: Եթե այո, ապա հրաժարվե՞լ են քաղաքացիությունից, թե՞ քաղաքացի են մինչ օրս:
5. Մեր առաջին հարցումը ստանալուց հետո փորձե՞լ եք կապ հաստատել Սենթ Քիթս և Նևիսի իշխանությունների հետ Ձեր առաջին խնդրանքի՝ քաղաքացիությունը սառեցնելու առնչությամբ: Եթե այո, հավելյալ տեղեկություն տվե՞լ են:

Կարո՞ղ եք պատասխանել մինչև հունվարի 24-ի աշխատանքային օրվա ավարտը: Եթե մինչ այդ չպատասխանեք, կհամարենք, որ չեք ցանկանում մեկնաբանել:

Հարգանքով՝
OCCRP

ԱՄՍԱԹԻՎ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 23, 2022
ՈՒՄԻՑ՝ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարգելի **[ԽՄԲԱԳՐՎԱԾ]**,
Շնորհակալություն հավելյալ հարցերի համար:

Ինչպես պատկերացնում եք, ես ունեմ պրոֆեսիոնալ խորհրդատուներ, որոնք օգնում են իմ գործերում և վարչարարական հարցերում: Սենթ Քիթսի գործարքի հետ կապված, ինչպես ես ձեզ ասացի, ներգրավել եմ պարոն Էնթոնի Բանքըրին՝ լոնդոնյան Berwin Leighton Paisner իրավաբանական ընկերությունից: Ցավոք, նա վերջերս է մահացել: Նա չափազանց ազնիվ մարդ էր, ինչպես, վստահ եմ, համոզվել եք: Նա նաև, ըստ իր հետ աշխատելու փորձառության, շատ արդյունավետ էր: Սա նշում եմ այն պատճառով, որ երբ ես նրան տվել էի իմ հրահանգները՝ կապված Սենթ Քիթսի անձնագրի հետ, ես կարծում էի, որ ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ դիմումը կասեցնելու և այնուհետև քաղաքացիությունից հրաժարվելու համար: Ես չունեմ նրա ֆայլերի պատճենը, և այն մանրամասները, որոնք ես ձեզ տվել եմ, ինձ մոտ եղած մի քանի փաստաթղթերից են:

Ձեր հետազոտությունը, ինչպես ես նշեցի, ինձ ավելի շատ տեղեկություններ է տվել, քան ես նախկինում ունեի: Ես, օրինակ, չէի լսել Հենլիի մասին, և դուք այժմ բացահայտեցիք այնպես, կարծես թվում է, թե դիմումի կասեցման սկզբնական խնդրանքը ստացվել և իրագործվել է, ինչը, տրամաբանորեն, ավելորդ կդարձներ (քաղաքացիությունից՝ Խմբ.) հրաժարվելու անհրաժեշտությունը: Համենայնդեպս, ինչպես նշել եմ, ես նույնպես անցել եմ (քաղաքացիությունից՝ Խմբ.) հրաժարվելու գործընթացով: Ուստի, ես ինձ չէի համարում և հիմա չեմ համարում Սենթ Քիթսի քաղաքացի:

Ինչ վերաբերում է փաստաթղթերի վերաբերյալ ձեր խնդրանքին, ես ենթադրում եմ, որ, հաշվի առնելով այն, որ մերժեցիք տրամադրել այն փաստաթղթերը, որոնք ունեք ձեռքի տակ, չնայած ձեր հարցումների թվացյալ փոփոխվող հիմքերին, ձեր հարցումը լուրջ չէր:

Ես շատ բաց եմ եղել ձեզ հետ՝ պատասխանելով ձեր հարցերին, չնայած այն հանգամանքին, որ դրանք մասնավոր հարցեր են: Անշուշտ, այս հարցի վերաբերյալ հոդված հրապարակելը կամ չհրապարակելը ձեր գործն է, բայց, ինչպես տեսնում եք, ես գործել եմ լիովին պատշաճ և, հետևաբար, ձեզ համար հոդվածը հրապարակելու կամ ինձ համար իմ՝ արդեն տված շատ բաց և անկեղծ պատասխաններից ավելի բան ասելու պատճառ չկա:

Վստահ եմ, որ այսքանը բավարար է թեման սպառելու համար:

Ձեր՝
Արմեն Սարգսյան